ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 30-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության, փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքների միացյալ ժողովը, որի աշխատանքին մասնակցում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ռ. Աբգուամանյանը, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ա. Մելքոնյանը, տնտեսագիտության բաժնի վարիչ Մ. Քսրանյանը:

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Գալոյանը: Հասարակագիտական բաժանմունքը երկու բաժանմունքների վերածվելուց հետո, ասաց նա, այսօր առաջին անգամ ենք հավաքվել լուրջ խոսակցություն բացելու մեր անելիքների մասին: Իսկ դրանք շատ են և պայմանավորված են այն խնդիրներով, որոնք մեր առջև դրվեցին ՍՄԿԿ XXVII համագումարի կողմից և գործնական ձևակերպումներ ստացան հասարակագիտական ամբիոնների վարիչների վերջերս տեղի ունեցած խորհրդակցությունում՝ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ճառում: Մենք ապրում ենք արմատական վերափոխությունների, սպասումների և հույսերի մի ժամանակաշրջան, երբ կուսակցության առաջադրած արմատական խնդիրների լուծումն անհնար է առանց մեր գաղափարական-տեսական գործունեության ակտիվացման, հասարակական գիտությունների դերի բարձրացման, առանց սոցիալական ու քաղաքական հեռանկարային կողմնորոշման:

ՍՄԿԿ XXVII համագումարից հետո նկատելի են տեղաշարժեր նաև մեր ինստիտուտների վերակազմության, գիտահետազոտական աշխատանքների պլանների ճշգրտման, ԳԱ հրատարակչության գործունեության բարելավման ասպարեզում, մշակվել է ժողովրդական զանգվածների ինտերնացիոնալ դաստիարակությանը նպատակամղված գիտական հետազոտությունների և կազմակերպական միջոցառումների համալիր պլան: Մեր ժողովրդի հոգևոր կյանքին մշտապես ուղեկցող երևույթ և ինտերնացիոնալ դաստիարակության կենարար աղբյուր է հայ և ռուս ժողովուրդների պատմական մեծ բարեկամությունը, որի գիտական հիմնավորվածության մեկնաբանումը և այդ գաղափարների պրոպագանդումը միշտ գտնվել է մեր հասարակագետների ուշադրության կենտրոնում: Մշակված է ռուսական մշակույթի, ռուսաց լեզվի խոր ուսումնասիրության պլան՝ հայ-ռուսական պատմական ու մշակութային կապերի հետագա խոր բացահայտման համար: Անդրկովկասի եղբայրական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների պրեզիդենտական խորհրդի հանձնարարությամբ մշակվել է համատեղ աշխատանքների պլան: Նախատեսվում է մասնավորապես առաջիկա տասնամյակում հրատարակել փաստաթղթերի եռահատոր ժողովածու՝ նվիրված Անդրկովկասը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուն, կոլեկտիվ մենագրություն՝ նվիրված հայրենասիրական և ինտերնացիոնալ դաստիարակության արդյունավետությանը, ազգային լեզուներով երկլեզու բառարաններ և այլն: Հատուկ հոդածության առարկա պետք է դառնա Անդրկովկասի ժողովուրդների վազ անցյալի պատմության հարցերի մշակումը, այն հաշվով, որպեսզի վեր հանվեն մեզ իրար կապող պատմական երևույթները, որպեսզի պատմությունը ծառայեցվի կոմունիստական շինարարության շահերին:

Այսօր մենք չենք կարող ասել, թե մեր այս կամ այն ինստիտուտը հանդիսանում է երկրի առջև կանգնած որևէ նոր պրոբլեմի տեսական իմաստավորման հեղինակ: Մեր հասարակագետների մեջ ինչ-որ չհաղթահարված կաշկանդվածություն, անհամարձակություն կա տեսության ոլորտում նոր խոսք ասելու նկատմամբ: Մենք, որպես կանոն, «տեսության հարցերում հանդես ենք գալիս ավելի շուտ որպես արդեն ճանաչում գտած տեսակետների պրոպագանդիստ»:

Լավ կլիներ, եթե այսօր ելույթ ունեցող ընկերները ուշադրության կենտրոնում պահեին այն խնդիրները, որոնք դրվեցին մեր հասարակագետների առջև Հայաստանի կոմկուսի Կենտկոմի Հոկտեմբերյան (1986 թ.) պլենու-

մի կողմից և պատասխանելի այն հարցին, թե ինչպես իրագործենք մեր վճռական շրջադարձը դեպի այդ խնդիրները։ Խոսքը չի վերաբերում ժամանակակից պահանջներին ուսումնասիրվող պրոբլեմների և թեմաների անվանումները հարմարեցնելուն։ Անհրաժեշտ է բարձրացնել բուն հետազոտությունների մակարդակը, փաստերի սթափ վերլուծության հիման վրա կատարել տեսական հիմնարար ընդհանրացումներ։ Սրա վրա պետք է կենտրոնացվի մեր բաժանմունքների, ինստիտուտների ղեկավարների, կուսակցական կազմակերպությունների, գիտական բոլոր աշխատողների ուշադրությունը։

Հասարակագիտական ինստիտուտներում, նշեց Գ. Գալոյանը, կատարվող գիտահետազոտական բոլոր աշխատանքները, նույնիսկ եթե դրանք վերաբերում են նախնադարյան տոներին ու դիցաբանությանը, ամբողջությամբ գաղափարական նշանակություն ունեցող գործեր են։ Այս պարզ պատճառով էլ մենք չենք կարող այսօր, երբ առավել մեծ սրության է հասել սոցիալիստական և բուրժուական գաղափարախոսությունների միջև պայքարը, հատուկ պահանջկոտություն չցուցաբերել հրատարակվող աշխատությունների գաղափարական մակարդակին, սոցիալական հետազոտությունների իրական արդյունքներին, որոնք պետք է ծառայեն մեր հասարակության զարգացման արագացմանը։ Հատկապես լուրջ ուշադրություն պետք է դարձվի սոցիալական ու տնտեսական կանխատեսումների հարցերին, ժողովուրդների բարեկամության կենարար ուժի բացահայտմանը, պատմական երևույթների ու դեմքերի, ազգային-ազատագրական շարժումների, քաղաքական կուսակցությունների գնահատման ժամանակ դասակարգային մոտեցմանը, հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների նպատակուղղված պրոպագանդմանը, դաշնակցության հայրենադավ քաղաքականության մերկացմանը։

Պատմության, Լեզվի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների ղեկավարների ուշադրությունը պետք է հրավիրել նաև այն փաստի վրա, որ վերջին տարիների ընթացքում մեր ժողովրդի պատմության՝ լուծման կարոտ հանգուցային մի շարք հարցերի մարքսիստական մեկնաբանումները բաց ենք թողել մեր ձեռքերից։ Սեփական ժողովրդի անցյալի նկատմամբ հետաքրքրության աճը ինքնին չը-պետք է դիտել, որպես հիվանդագին երևույթ։ Պատմությանը ժողովրդի հիշողությունն է, երիտասարդությանը հայրենասիրության ոգով զաստիարակելու ամենակարևոր միջոցը։ Գլխավորն այն է, որ այդ հետաքրքրությանը հաղորդվի ճիշտ ուղղություն, թույլ չտրվի պատմական փաստերի խեղաթյուրում։ Այս կապակցությամբ հարկ է անդրադառնալ հայ ժողովրդի ծագման, Ուրարտուի և հարակից այն հարցերի շուրջը ծագած վիճաբանություններին, որոնք դուրս են եկել գիտական աշխարհի շրջանակներից։

Մեր մասնագետ պատմաբաններն ու լեզվաբանները, տգնելով հին կոնցեպցիաների բեռի տակ, չեն շտապում հանդես գալ իրենց կարծիքով։ Ինստիտուտների ղեկավարները չը-նկատելու են տալիս այս փաստը։ Անհանգստություն չեն ապրում բաժանմունքներն ու ԳԱ նախագահությունը։ Բացը լրացնում են «սիրողները», որոնք իրենց բարի մտադրությամբ, բայց պատմական նյութի խիստ թերի իմացությամբ գիտական վիճաբանությանը հաղորդում են սխալ ընթացք։ Իսկ մեր մամուլը, հեռուստատեսությունը, հրատարակչությունները հանդես չեն բերում զգուշություն։ Մենք ավելի շատ էներգիա ենք ծախսում բորբոքված վիճաբանություններում, քան որոնողական բնույթ ունեցող այս պրոբլեմի գիտական մշակման ասպարեզում։

Այս օրինակը ցույց է տալիս, թե քաղաքական ինչպիսի արդիական հնչեղություն կարող են ստանալ նույնիսկ հազարամյակների վաղեմություն ունեցող պատմական փաստերը։ Ճառերով, կրքերի բորբոքումներով, որոշումներով այս հարցերը չեն կարող լուծվել, անհրաժեշտ է մտածել մեր ժողովրդի հնագույն շրջանի պատմության ու լեզվի ավելի խոր ուսումնասիրությունը կազմակերպելու, այդ ուղղությամբ բանիմաց մասնագետներ աճեցնելու մասին։ Միայն գիտական անառարկելի փաստարկներով մենք ուժ կունենանք պատմության կեղծարարների դեմ պայքարելու համար։

Անհրաժեշտ է, այնուհետև շարունակեց Գ. Գալոյանը, վճռականապես հաղթահարել մեր հին և քրոնիկ բնույթ կրող հիվանդությունը, երբ ինստիտուտների մշակվող թեմատիկան գերազանցապես որոշվում է ըստ առանձին գիտական աշխատողների նախասիրությունների։ Գիտական խորհուրդները առավել ակտիվ ներգործություն պետք է դրսևորեն գիտական թեմատիկայի ուղղությունները որոշելիս։ Իսկ բաժանմունքներն ու ԳԱ նախագահությունը առավել ուշադրությամբ պետք է ուսումնասիրեն ինստիտուտների թեմատիկ պլանները և հրաժարվեն ձևական մոտեցումից։

Այժմ, երբ հասարակական զարգացումն առաջադրում է այնպիսի պրոբլեմներ, որոնք առավելապես կոմպլեքսային բնույթ են կրում,

առաջնակարգ նշանակություն է ստանում հասարակական բոլոր գիտությունների ինտեգրացման հարցը։ Մինչև նախկին հասարակագիտական բաժանմունքը երկու բաժանմունքների վերածելը աստիճանաբար դրսևորում է իր բացասական կողմերը։ Նկատելի է դարձել անշտվածությունը հասարակագիտական ինստիտուտների միջև։ Մեր ժողովրդի պատմության և մշակույթի պրոբլեմների համատեղ հետազոտությունները մղվում են հետին պլան։ Մենք գործնական քիչ քայլեր ենք կատարում մեր ինստիտուտների համագործակցությունը սերտացնելու համար։ Հայտնի են օրինակներ, երբ նույնիսկ ամենափոքր հարցերը լուծելու համար տարբեր բաժանմունքների մեջ մտնող ինստիտուտները ստիպված են դիմել նախագահությանը։ Կարծում եմ, նման աշխատանքը ընդունելի չէ։

Վերակառուցման պրոցեսին պետք է ակտիվորեն ներգրավվեն «Պատմա-բանասիրական հանդես»-ի և «Լրաբեր հասարակական գիտություններիՠ» խմբագրությունները։ Անհրաժեշտ է բարձրացնել պահանջկոտությունը տպագրության համար ներկայացվող հոդվածների նկատմամբ, պետք է հասնել այն բանին, որպեսզի ուշադրության կենտրոնում պահվեն զարգացվող գիտական ուղղությունները, թափ հաղորդվեն գիտական քննադատության զարգացմանը, հարձակողական պայքար մղվի բուրժուական գաղափարախոսության դեմ։ Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն նվիրել՝ մեթոդաբանական և աշխարհայացքային հարցերի լուսաբանմանը։

Այնուհետև Գ. Գալոյանը նշեց, որ հասարակագետների գիտահետազոտական աշխատանքների պլաններում պետք է պատշաճ տեղ գրավեն կապիտալիզմի և սոցիալիզմի պատմական հակամարտության հարցերը, գիտական հիմնավորվածությամբ լուսաբանվի ՍՄԿԿ-ի լենինյան արտաքին քաղաքականությունը։

ՀՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտը անդրադարձավ հասարակության առաջընթաց զարգացման մեջ մարդկային գործոնի ակտիվացման անհրաժեշտությանը, կադրերի հետ տարվող աշխատանքին, գիտության աշխատողների ուժերի խնայողությանն ու ճիշտ օգտագործմանը, նրանց կյանքի ու գործունեության կոմպլեքսային պրոբլեմների լուծմանը։ Նա հույս հայտնեց, որ զեկուցումներում և ելույթներում ավելի կկոնկրետացվեն հասարակագետների խնդիրները և հատուկ ուշադրություն կդարձվի բուհերի հասարակագիտական ամբիոնների հետ ակադեմիայի ինստիտուտների գործունեության կոորդինացման, աթեիստական պրոպագանդայի խելացի կազմակերպման, գիտական հատունացած պրոբլեմների շուրջը բանավեճեր կազմակերպելու և հրատապ այլ հարցերի վրա։

Վերջում Գ. Գալոյանը նշեց, որ բաժանմունքների միացյալ ժողովը լուրջ ազդակ կըհանդիսանա կուսակցության XXVII համագումարի պահանջների ոգով հասարակագիտական ինստիտուտների գործունեության հետագա բարելավման, գիտաշխատողների ուժերի առավել արդյունավետ օգտագործման համար։

«ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների ինստիտուտների խնդիրները ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումների և հասարակական գիտությունների ամբիոնների վարիչների համամիութենական խորհրդակցությունում ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Մ. Ս. Գորբաչովի առաջ քաշած դրույթների լույսի ներքո» զեկուցումներով հանդես եկան պատմության և տնտեսագիտության ու փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ Բ. Առաքելյանը և Գ. Բռուտյանը։

Սովետական ժողովրդի հասարակական, տնտեսական կյանքի և գաղափարական աշխատանքների վերակառուցումը, ասաց Բ. Առաքելյանը, ամենայն սրությամբ առաջադրվեց ՍՄԿԿ XXVII համագումարում, իբրև կարևորագույն և անհետաձգելի խնդիր։ Գաղափարական աշխատանքների վերակառուցման նոր ազդակ հանդիսացավ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ճառը հասարակական գիտությունների ամբիոնների վարիչների համամիութենական խորհրդակցությունում հոկտեմբերի 1-ին։ Այդ ճառը իր արձագանքներն ունեցավ մամուլում, կուսակցական, սովետական, գիտական և հասարակական կազմակերպություններում։ Այդ հարցերին էր նվիրված ՀԿԿ Կենտկոմի 1986 թ. հոկտեմբերի 5-ին գումարված պլենումը, որտեղ զեկուցումով հանդես եկավ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը։ Նույն հարցերը քննարկման առարկա դարձան նաև ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովում, որտեղ բացման ճառով հանդես եկավ ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ե. Կ. Լիգաչովը։

XXVII համագումարը բարձր գնահատեց հասարակական գիտությունների դերը Սովետական Միության հասարակական-տնտեսական և գաղափարական զարգացման ու վերափոխությունների գործում։ Մ. Ս. Գորբաչովն իր ճառում սրությամբ դրեց գաղափարական աշխատանքների վերակառուցման հարցը։ Ընդգծվեց, որ զարգացող սոցիալիզմի արդի փուլում կյանքի երևույթների և գործունեության

բոլոր ոլորտների տեսական իմաստավորումը առաջնահերթ ուժ է։

Հասարակական գիտությունները, շարունակեց զեկուցողը, իրենց դերը կատարելու համար առաջին հերթին իրենք պետք է կատարելագործվեն, իսկ դրա ուղին ձգվում է հասարակության վերաբերյալ մարքս-լենինյան ուսմունքի հզոր զենքի՝ դիալեկտիկական մտածողությանը տիրապետելու միջով։ Այլապես նրանք չեն կարողանա իրականացնել իրենց առջև ծառացած բարդ և պատասխանատու խնդիրները՝ պատշաճ մակարդակով, իսկ այդ խնդիրները մեծ են, բազմազան։ Գլխավոր խնդիրներից մեկը գիտահետազոտական աշխատանքի իրականացումն է տեսական բարձր մակարդակով, փաստական հարուստ նյութերի հիման վրա կատարվող գիտական վերլուծությամբ, նոր խոսք ասելու ձգտումով և ուսումնասիրությունը կյանքի արդի պահանջներին ի սպաս դնելու գործնական նպատակամղումով։ Մեծ է մարդկային գործոնի դերն ու նշանակությունը և դա հանգում է կադրերի պատրաստման պրոբլեմին։ Այստեղ ևս թերությունները զգալի են։ Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմորդների թիվը նվազել է։ Պետք է վերլուծել դրա պատճառները և վերացնել դրանք։ Թույլ է օգտագործվում այնպիսի կարևոր հնարավորությունը, ինչպիսին է կադրեր պատրաստելը նպատակային ասպիրանտուրայի միջոցով։ Անհրաժեշտ է բարձրացնել ասպիրանտների, ինչպես և նրանց ղեկավարների պատասխանատվությունը։ Ասպիրանտները ժամանակին չեն պաշտպանում իրենց դիսերտացիաները։ Նվազել է դոկտորական դիսերտացիաների պաշտպանության քանակը, անհանգստացնող չափերով բարձրացել է գիտական աշխատողների միջին տարիքը։ Կադրերի պատրաստման գործում մեծ կարևորություն է ներկայացնում բազմակողմանի իմացություններ ունեցող գիտական աշխատակիցների պատրաստումը։

Գիտական-գաղափարական աշխատանքի առավել կարևոր բնագավառներից է, այնուհետև ասաց Բ. Առաքելյանը, ինտերնացիոնալ և հայրենասիրական դաստիարակության բնագավառը։ Մշակվել են հայ-ռուսական հարաբերությունների մի շարք հարցեր, միջոցառումներ ռուսական մշակույթի ուսումնասիրության, հայ-ռուսական բարեկամության մեջ մոտ գտնվող հուշարձանների թվի բազմացման և դրանք խնամքով պահպանելու ուղղությամբ։ Մշակվել է ծրագիր Անդրկովկասի երեք ակադեմիաների համատեղ աշխատանքների և եղբայրական ժողովուրդների բարեկամության ամրապնդման նպատակով։ Սակայն հաջողությունների կողքին քիչ չեն նաև թերություններն. ու թերացումները։ Անհրաժեշտ է ավելի լայն և խոր աշխատանք ծավալել հայ ժողովրդի արդի պատմության վերլուծական լուսաբանության, նրա տեսական իմաստավորման բնագավառում, ինչպես և մեր ժողովրդի պատմության նվազ ուսումնասիրված դարաշրջանների [illegible]։ Այժմ հրապարակ են եկել մեր ժողովրդի պատմությունը խեղաթյուրող որոշ տեսակետներ՝ հայ ժողովրդի կազմավորման, մանավանդ Ուրարտական պետության վերաբերյալ։ Կան նաև Անդրկովկասի ժողովուրդների պատմությանը վերաբերող և դարավոր հարևան ժողովուրդների բարեկամության համար աննպաստ աշխատություններ, հրատարակված Ադրբեջանական ՍՍՀ-ում, նաև՝ Վրացական ՍՍՀ-ում։ Տեղին է ակադեմիկոս Գ. Գալոյանի առաջարկը, որ նման երևույթները կարելի է կանխել աշխատությունների համատեղ քննարկմամբ՝ մինչև դրանց հրատարակումը, իսկ արդեն հրատարակվածները նույնպես պետք է համատեղ քննարկվեն և գրախոսվեն շրջահայաց ու հիմնավոր եղանակով։

Բ. Առաքելյանը խոսեց նաև գիտական բանավեճերի կազմակերպման, ինստիտուտների բաժիններում, գիտական խորհրդի նիստերում տպագրության հանձնարարվող աշխատությունների գիտական հիմնավոր քննարկումների, հրատարակված գրքերի հրապարակային քննարկումների, աշխատությունները հրատարակության երաշխավորող գրախոսողների պատասխանատվության բարձրացման, աթեիզմի գիտական պրոպագանդման, հայ եկեղեցու՝ մարքս-լենինյան քննական պատմություն ըստեղծելու անհրաժեշտության մասին, անդրադարձավ գիտնականների սոցիալ-տնտեսական սպասարկման բնագավառին։

ՍՄԿԿ XXVII համագումարը, իր զեկուցման մեջ ասաց Գ. Բրուտյանը, գիտնականներից պահանջում է նոր մտածելակերպ, նոր ոճ։ Այդ նորը ես տեսնում եմ այն բանում, որ մենք պետք է վերակառուցենք ինստիտուտների աշխատանքները և՛ կառուցվածքի, և՛ գիտահետազոտական աշխատանքների թեմատիկայի, և՛ վերջիններիս պլանավորման տեսանկյունից։ Բաժանմունքի ինստիտուտները զգալի աշխատանք են կատարել այս ուղղությամբ։ Այսպես, ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտն ունեցել է 8 բաժին և 1 լաբորատորիա, այժմ ունի 6 բաժին, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտն ունեցել է 11 բաժին և 1 լաբորատորիա, այժմ ունի 10 բաժին, Մ. Աբեղյանի

անվան գրականության ինստիտուտն ունեցել է 6 բաժին և 1 պրոբլեմային խումբ, այժմ ունի 7 բաժին, Արվեստի ինստիտուտն ունեցել է 7 բաժին, 1 խումբ և 1 կենտրոն, այժմ ունի 6 բաժին և 1 կենտրոն։

Կառուցվածքային փոփոխություններին զուգընթաց զգալի փոփոխություններ է կրել նաև բաժանմունքի ինստիտուտների գիտահետազոտական աշխատանքների թեմատիկան։ Մշակվել են միջոցառումների մի շարք համալիր պլաններ ռուսական մշակույթի, հայ-ռուսական մշակութային կապերի ուսումնասիրության, անդրկովկասյան հանրապետությունների ինտերնացիոնալ կապերի հետագա զարգացման, հակապրոպագանդայի, հանրապետության աշխատավորների ինտերնացիոնալ և աթեիստական դաստիարակության ուղղությամբ։ Ի դեպ, ՍԱՀՄ փիլիսոփայական ընկերության հայկական բաժանմունքում ստեղծվել է աթեիզմի մասնաճյուղ, որը նախապատրաստել և շուտով հրատարակության կհանձնի աթեիզմի հարցերին նվիրված ժողովածու։

Այնուհետև Գ. Բրուտյանն խոսեց վերջին տարիների ընթացքում բաժանմունքի ինստիտուտների ձեռք բերած զգալի հաջողությունների մասին, անդրադարձավ աշխատանքներում եղած թերություններին։ Մենք, ասաց զեկուցողը, դեռևս հետևողականորեն չենք կարողանում իրականացնել նոր մտածելակերպի, նոր ոճի պահանջները, որին խոչընդոտում է երկար տարիների ընթացքում ամրագրված ստereոտիպը։ Մեր գիտաշխատողներն ունեն իրենց սեփական թեմաները, որոնք կատարում են իրենց ուժերով։ Սակայն գիտությունը զարգանում է և առաջադրում նոր համալիր թեմաներ, որոնց իրագործումը պահանջում է կոլեկտիվ ուժեր։ Գիտության զարգացման միտումը կոլեկտիվ աշխատանքներն են, որոնք գրեթե չեն իրագործվում մեր ինստիտուտներում։ Մենք թեև ունենք կոլեկտիվ աշխատանքների պլաններ, սակայն արմատական խզում գոյություն ունի ելքի և մուտքի միջև. մուտքը կոլեկտիվ է, ելքը՝ մենագրական։ Հարկ է ասել նաև, որ դեռևս կոլեկտիվ աշխատանքներ չեն կարող կոչվել այն ժողովածուները, որտեղ չկա մտահղացման միասնություն։ Միասնական կոնցեպցիայի մշակմանը զգալիորեն կարող են օգնել տեսական սեմինարները, որտեղ մշակվում է պրոբլեմի մտահղացման և լուծման միասնական եղանակ։

Գ. Բրուտյանը անդրադարձավ գիտահետազոտական աշխատանքների պլանավորման գոյություն ունեցող ձևին, նշեց, որ այն հաջող չէ։ Մենք պետք է նախ որոշենք, թե գիտության զարգացումը ինչ նոր պահանջներ է դնում մեր առջև, պետք է պարզենք, թե ՀՍՍՀ-ի համար որ պրոբլեմի լուծումն է առաջնակարգ խնդիր, ինչ ուժեր ունի հանրապետությունը այդ պրոբլեմների լուծման համար, և ապա նոր միայն ինստիտուտներին տանք առաջադրանքներ։ Այդ պրոբլեմների լուծման համար ինստիտուտներում պետք է ստեղծվեն պրոբլեմային խմբեր, որոնցում պետք է ընդգրկվեն ոչ միայն ինստիտուտների, այլև հանրապետության այլ հիմնարկների համապատասխան մասնագետները։ Գիտության զարգացումը պահանջում է հարցին մոտենալ ահա այս տեսանկյունից։ Մենք հաճախ ենք խոսում գիտահետազոտական թեմաների արդիականության մասին։ Սակայն թեմաների արդիականությունը չպետք է հասկանալ ձևականորեն։ Արդիականությունը նաև անցյալն այսօրվա տեսանկյունից ներկայացնելն է։

Մեծ անելիքներ կան հայագետների պատրաստման գործում։ Շատ երկրների խոշոր բուհեր ունեն հայագիտական կենտրոններ, որտեղ դասավանդվում է գրաբար, հունարեն, օտար լեզուներ։ Մեզ մոտ ապագա հայագետները նույնպես պետք է լավ տիրապետեն գրաբարին, հունարենին, լատիներենին, անգլերենին։ Ի դեպ, մեկ օտար լեզուն շատ քիչ է։ Հայագիտության պրոբլեմներով պետք է զբաղվել ժամանակակից տեսության մակարդակով։ Մեր հայագիտական հետազոտությունները պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին։ Երևանը պետք է լինի հայագիտության խոշորագույն կենտրոնը ամբողջ աշխարհում, այլապես այլ երկրների հայագիտական կենտրոնները կարող են մեզանից խլել այդ մենաշնորհը, եթե մենք լուրջ փոփոխություններ չմտցնենք հայագետների պատրաստման գործում։

Վերջում Գ. Բրուտյանը խոսեց հասարակագիտական ինստիտուտների նյութատեխնիկական դեռևս անբավարար բազայի մասին։ Նա հատուկ ուշադրություն հրավիրեց գիտության աշխատողների ուժերի խնայողության և այն նպատակային օգտագործելու հարցի հրատապության վրա։

Զեկուցումների շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ստամբեկյանը, Էդ. Չրբաշյանը, Գ. Ջանուկյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Ռ. Զարյանը, Գ. Սարգսյանը, պատմական գիտությունների դոկտորներ Հ. Ավետիսյանը, Խ. Բարսեղյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Թովմասյանը։ Նրանք խոսեցին հասարակագիտական բաժանմունքների գիտական համագործակցության,

հասարակական գիտությունների բնագավառում մեքենայական, հաշվիչ տեխնիկայի կիրառման անհրաժեշտության, գիտնականների ժամանակի և ուժերի խնայողության, աշխատանքների կոորդինացիայի, բաժինների վերակառուցման, հրատարակվող գրքերը միջազգային շրջանառության մեջ դնելու, հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, ինստիտուտների միջազգային գիտական կապերի, երիտասարդ կադրերի պատրաստման, ասպիրանտների աշխատանքի տեղավորման, տեսության և պրակտիկայի մերձեցման հարցերի, մարդկային գործոնի արդյունավետության էական բարձրացման հարցի հետ սերտորեն կապված պարգևատրության, խրախուսման ֆոնդի օգտագործման, հրատարակչական գործի արմատական բարելավման, պոլիգրաֆիական անհրաժեշտ բազայի ստեղծման անհրաժեշտության մասին։

ՀՍՍՀ ԳԱ հասարակագիտական բաժանմունքների միացյալ ժողովի աշխատանքներն ամփոփեց Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

Միացյալ ժողովը քննարկված հարցերի շուրջ ընդունեց համապատասխան որոշում։